

ՊԱՐԱԿԱՆ Ք
Տարեկան գին և Պարտոյն 8 ՄԷԸ
Պարտաւոր 10 ՄԷԸ
Վերականգնող և Պարտոյն 4 ՄԷԸ
Պարտաւոր 3 ՄԷԸ
Պարտաւոր 60 ՄԷԸ
Պարտաւոր 100 ՄԷԸ
Պարտաւոր 150 ՄԷԸ
Պարտաւոր 200 ՄԷԸ
Պարտաւոր 250 ՄԷԸ
Պարտաւոր 300 ՄԷԸ
Պարտաւոր 350 ՄԷԸ
Պարտաւոր 400 ՄԷԸ
Պարտաւոր 450 ՄԷԸ
Պարտաւոր 500 ՄԷԸ
Պարտաւոր 550 ՄԷԸ
Պարտաւոր 600 ՄԷԸ
Պարտաւոր 650 ՄԷԸ
Պարտաւոր 700 ՄԷԸ
Պարտաւոր 750 ՄԷԸ
Պարտաւոր 800 ՄԷԸ
Պարտաւոր 850 ՄԷԸ
Պարտաւոր 900 ՄԷԸ
Պարտաւոր 950 ՄԷԸ
Պարտաւոր 1000 ՄԷԸ



ԼՐԱԳԻՒ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 22 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ ազգային ժողովոյն նոր-
ընտիր նախագահ Պ. Օտիֆրէ-Բաս-
քիէ դուքսը՝ նախագահական ամբի-
ռը նստած ժամանակ նշանաւոր ա-
տենաբանութիւն մը ըրաւ, որ ոչ մի-
այն Գաղղիոյ այլ և բովանդակ էւ-
րոպայի մէջ լաւ ազդեցութիւն մը ու-
նեցաւ։

Գաղղիոյ ազգաբնակիչները
առ հասարակ գոհութիւն կը յայտ-
նեն յիշեալ ատենաբանութեան վը-
րայ, գլխաւորապէս այս պատճառաւ
որ նոր նախարարութեան գլուխ Պ.
Պիլիքի ըրած յայտարարութեանց
ստորագրում և թերի կէտերը պարզե-
լով կը բացատրէ և կամայականօրէն
նշանաւոր ազգաբնակիչ սկզբանց։

Ահաւասիկ Պ. Օտիֆրէ-Բասքի-
էի ատենաբանութեան պաշտօնական
պատճենը։

«Տեառք։
«Խորին զգացմամբ սրտի շնոր-
հակաբանութիւնս կը յայտնեմ ձեզ այս
նշանաւոր պատուոյն համար՝ որուն
երբէք չէի համարձակիր թեկն ա-
ծել։

«Նախագահական ամբիռն ելնե-
լով կը գտնեմ ձոն հաստատամտու-
թեան և անկողմնակալութեան ա-
ւանդութիւններ՝ իմ ակնաւոր նա-
խորդներէս թողուած, որոց հետեւի
միայն կը մնայ ինձ, որպէս զի ձեր
ինձ ցուցած փառաբանութեան արժանի
ըլլամ։

«Սակայն՝ ինձ յանձնուած պաշ-
տօնն արժանապէս կատարելէ պիտի
յուսահատեի, եթէ չգիտնայի թէ
դուք ալ կ'զգաք որ ձեր օրոշմանց
կշտանութիւնն ամեն ժամանակէ ա-
ւելի զօրացնել հարկ է։

«Գաղղիա՝ անցելոյն մէջ՝ երկրին
այսպէս ինքիւրմով կառավարութեան
և յաճախ զրպարտեալ խորհրդարա-
նական դուրսեան շնորհիւ յաջող և
փառաւոր օրեր ունեցած է դառն
փորձութիւններէ ետեւ։ (Ընդհանուր
և ջերմ հաւանութեան նշանք)։

«Այս, այս կառավարական դը-
րութեան շնորհիւն է որ չորս տարիէ
ի վեր ամենազմեղակ փորձերու
յողովեց և դուք ալ ձեր օրոշմամբ
ազգային ասոր յանձնեցիք։ (Շար-
ժում)։

«Զմուռաց թէ երկիր մ'իւր հա-
սարակալին ազատութիւններէն հը-
րաժարելով՝ ողջափ կը փնտռուի։
(Մտաւարտութիւնը ձախէն ու կեդ-
րանէն)։ Այս ժողովին փառքը պիտի
ըլլայ դանձր վերահաստատելն ու
յորդելն։ (Հաւանութիւնք)։

«Դուք, տեառք, ձեր չափա-
ւորութեամբ դանձր օր քան զօր

առաւել սիրելի պիտի ընէք երկրին
փորձով ցուցնելն անոր թէ իրեն ա-
մենահարկաւոր եղած բարեկարգու-
թեան ու անկեղծութեան ամե-
նէն ապահով երաշխաւորութիւնն ա-
զատութիւնն է։ (Բուռն ծափահա-
րութիւնք և հաւանութեան նշանք
ձախակողմէն և ձախ կեդրոնէն)։

«Ասոր մէջ են իմ ամենէն սի-
րելի յիշատակներս ու համոզմուն-
քս։ Ուստի ազատութեան պաշտ-
պանութիւնն ապահովելու համար
բացարձակ անձնակրթութեանս վրայ
մի երկրպագ։ (Երկար և ջերմ ծա-
փահարութիւնք)։

Հետեւեալ եկած լուրերը կը ծանու-
ցանեն թէ իտալական կառավարու-
թիւնն Աւստրիոյ կայսեր այցելութիւ-
նէն արժանապէս ընդունելու կը
պատրաստուի։

Ումպէրթօ արքայորդին սահմա-
նագրութեան պիտի երթայ կայսրը դե-
մաւորելու։ Նոյնպէս վէրոնայի բա-
նակին հրամայար Բիւրնելլի զօրապե-
տին իւր գաւառին սահմանագրութեան
պիտի գտնուի կայսեր հոն հասած
ժամանակ։

Պէրլինէն մարտ 22 թուով լուր
կուտան թէ Բոլշէի փէհմ քաղաքին
ժողովուրդն ոտք ելնելով թշնամա-
կան ցոյցեր ընրել է կառավարութեան
կողմէ դուրսած աւագերէցի մը դէմ
և թէ՛ խռովութիւնը դադարեցնելու
համար օտարականութեան զօրաց մի-
ջամուրթիւնն հարկ եղեր է։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Փարիզ 31 մարտ.
Կառավարութեան կրաւորական
դէրքը քաջալերութիւն կուտայ Պո-
նաբարթեանց և Օրլէանեանց։

Պապը նոր կոնգակաւ մը կը նու-
րագէ Գերմանիոյ հին կաթողիկոս դէմ
արձակած բանագրանքը։

Լոնտոն 1 ապրիլ.
Երմանական տարւոյն մասքը՝ որ
երէկ աւարտեցաւ, 74 1/2 միլիոնի
հասած է, այն է հաշուեցոյցին նա-
խատեսածէն կէս միլիոնէն աւելի։

Փարիզ 1 ապրիլ.
Պ. Տիւֆօրի մէկ շրջաբերականը
կը հրատարակէ դատաւարական պաշ-
տօնեային որ հաստատեալ կառա-
վարութիւնն յորդեն և առանց բա-
ցառութեան ամեն կուսակցութեանց
անկողմնակալ արդարութիւն ընեն։

Վիեննա 1 ապրիլ.
Վիեննայի կազմէ լրագրէր կայ-
սեր վենետիկ երթալու համար այս
իրիկուն ճանաչող երկրը ծանուցանե-
լով կըսէ թէ վենետիկ մէջ կատար-
ուելիք հանգէսներն աւելի փառա-
ւոր պիտի ըլլան այս մասածութեամբ
թէ Աւստրիոյ և իտալիոյ վեհապե-

տոց տեսակցութիւնն իւր քաղաքա-
կան բնութիւնն երեք կայսերաց
գաղնակցութեան ամրապնդութեանը
մէջ պիտի դանէ, դաշնակցութիւն մը,
յորմէ խաղաղ ալ օտար չէ, և սրուն
աւելի ևս պիտի մօտենայ։

Պէրլին 1 ապրիլ.
Պիամարք իշխանին ծննդեան տա-
րեդարձը մեծ հանդիսիւ կատար-
ուեցաւ։

Լոնտոն 31 մարտ.
Կը ծանուցուի թէ հեռագրաց
ճարտարագետ Ուիլիէյ 500000 լիւրս
բացով սնանկացեր է։

Մատրիւ 1 ապրիլ.
Տոն Գարրոս՝ Ռամալէս մոտ։

Լոնտոն 2 ապրիլ.

Պատ.	Քոնս.	43 31/4
Քոնս.	1865	74 1/2
»	1869	54 առանց կարծիքի
»	1871	67 7/8
»	1872	82 3/4
»	1873	52 9/16

Նոր փոխառութիւն —

Անգլ. քոնս. 83 5/16

Իրիւրու 2 ապրիլ.

Բաւարական Միալիսի — Օրլէան 8

» Ֆար Տօլէրան 5

Կրօնական 45000 հոգի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Արքայի պարտաւոր հին սենեկա-
պետներէն Շէվքէթ պէյ վերստին
նոյն պաշտօնին կոչուեցաւ Ստամբու-
լին էֆէնտիի տեղ։

Պետական խորհրդոյ նախագահ
Բարձր. ֆեւալի փաշան հինգշաբթի
իրիկուն փառաւոր կոչուեք մը տը-
ւաւ տեղութեան նախարարաց և
օտար դեսպանաց։

Հինգշաբթի առաւօտ, դեռ չու-
կան չբացուած, սկիւրդի մը դոյ
խանութէն հրդեհ ելնելով՝ երկու
խանութ այրեցան։

Բարձր. Մեծ — Եպարքոսն հրդեհը
լսածին պէս իսկոյն օգնութեան դի-
մեց, և իւր աղբու տնօրէնութեամբ
հրդեհին առաջին առաւ, առանց
թոյլ տալու որ դուրսէն մարդ մտնէ
չուկային մէջ։

Գամակոսէն մարտ 20 թուով լէ-
վընթ Հէրալտի գրուած նամակ մը
կը ծանուցանէ թէ Գամակոսի անդ-
ղիական հիւպատոսն սպաննելու փորձ
փորձուեր է մարտ 11 ին օրը։ Երբ
յիշեալ հիւպատոսն իւր տունէն ել-
նելով խաղաղ հիւպատոսարանը կեր-
թար, երեք տաճիկ զօգեր գիմացը
կենցեց, և մին դաշայն ի ձեռնին հիւ-
պատոսին վրայ կը յարձակի, Հիւպա-
տոսն ետ ետ երթալով դաշայնէն ա-
տրճանակ մը կը հանէ ինքիւնը պաշտ-
պանելու համար։ Գոզը զայս տեսե-
լուն պէս ետ կը գառնայ և ճանաչան
երկու մարդու հանգիւղելով զանոնք
կը հարուածէ և մէկուն 600 շըշը
կը կտրուցէ։

Գաւառ գաղաժ լրագրաց հանձն
ձեռքը խմբագրութեան վրայ և։
Լրագրոյ վերաբերեալ նամակ
գամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի աղարկուի։ Վ. Պո-
լիս, Չիկիլի խան, Մառաի գրասեն-
եակը։
Համբու ծախքը չվճարուած հո-
մակ չընդունուիր։

Այս դէպքին վրայ Գամակոսի
բոլոր հիւպատոսները միաբանելով
պատգամաւոր մը կը զրկեն կուսա-
կալին և կը խնդրեն որ վերոյիշեալ
աւագակները դաշնելու համար աղ-
դու միջոցներ ձեռք առնու-
ն։
Կուսակալն ալ ամեն կողմ օտա-
կանութեան զինուորներ հանելով,
չարագործներէն մին Շէյխի մը տու-
նէն կը դանէ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶՍՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

21 մարտ ուրբաթ իրիկուն 48 21

22 մարտ շաբաթ առաւօտ

Բացուեցաւ 48 23

Կէս օր 48 20

Կ. Պոլիս 21 մարտ.

Ստիվիլ լէվելայի բաժինը Անգլ. լիւր 8 4

« փոխառութեան » 5.35

Կ. Պոլիս Պանքայն » 6.36

Քրէտի լէվելայ » 42

Քրէտի լիւր » —

Երկաթուղեաց հին 3րդ 427

Փոխ. 4863 » 352

» 4865 » 357

» 4869 » 291 1/2

» 4872 » 83 1/2

» 4873 » 283

Քրաւու և 1 օտ. լիւր 3 70

ԱԶԳԱՅԻՆ

Ազգային ժողովոյ երէկուան նիս-
տին իրապէս արդիւնաւոր եղաւ ա-
մենակարեւոր որոշմամբ մը, որուն
տաանհանգ տարիէ ի վեր ազգը
կ'ապասէր։

Ազգային տրոյ վրայ Գաղաքա-
կան ժողովոյ ներկայացուցած ծրա-
դիրն յօդուած առ յօդուած քնն-
նուելէ ետեւ՝ ինչ ինչ փոփոխութեամբ
իւր վերջնական որոշումն ստացաւ և
ազգային օրէնք մ'եղաւ, զոր ամեն
ազգասէր հայ պարտական է յար-
գել իր բոլ. Սահմանադրութեան հիմ-
նական սկզբանց առաջինն, այն է
պարտեաց և իրաւանց սկզբունքն
որ դեռ կանոնաւորապէս դորձադը-
րութիւն չէր գտած։

Արդ՝ պատմեալ երէկուան նիս-
տին գործողութիւնը։
Ժամ և օթնուկէսին տուտն բաց-
ուցաւ ընդ նախագահութեամբ Ամեն.
Ս. Պատրիարք Տօր, և առնապէս առ-
թեմա Մեծ. Բուսինեան էֆէնտիի։

Բացակայ երեսփոխանաց ամենց
նամակները կարգացուելէ ետեւ, ազ-
գային ժողովոյ կողմէն առ Ամենայն
Հայոց Վեհ. կաթողիկոսն ուղղեալ նա-
մակ մը պատճենը կարգացուեցաւ, զոր
Ս. Պատրիարք Հայրն և Մայր
դիւանն յանուն Ազգային ժողովոյ ըս-
տորաբար լուր վէհ. Հայրապետին պի-
տի զրկեն։

Յետոյ ժողովը ինքրոյ կողմէն

անցնելով, ազդեցին արոց ծրագրին, յօդուածները մի առ մի քննեց, և ինչ ինչ փոփոխութեամբ քնդռնելէ ետեւ, ամբողջին վրայ յանուանէ. քրէակարկութիւն եղաւ և համայն երեսփոխաններէն ընդունուելով վարչութեան յանձնուեցաւ ի գործադրութիւն:

Այս կարեւոր որոշումը տրուելուն վրայ Ս. Պատրիարք հայրն սուր ելնելով շնորհակալութիւն յայտնեց ազգային երեսփոխանութեան՝ այս մեծ խնդիրը շուտով լուծելուն համար, միանգամայն ծանոյց թէ ազգային ժողովոյ նիստերը Զատիկի տօներուն պատճառաւ տրիտի գոցուին մինչև մայիս 2:

Ժողովականք Վեցցէ ներսէս սըրբազանս գոչելով ընդունեցին Սրբազան նախագահին սիրալիր խօսքերը և բարեմաղթութիւնները, և ատենանք գոցուեցաւ ժամ 10ին:

Ինչպէս որ հինգշաբթի առուր թուով ծանուցած էինք, կաթողիկէ Հայոց Պատրիարք Գերապայճաւ Տ. Թոհման Բիւրէշեան արքեպիսկոպոսը նոյն օրը ժամ 6 ին Գլուճափուի Հայոց Պատրիարքարանն եկաւ յայցելութիւն մեր Ամեն . Ս. Պատրիարք հօր, իւր հետ ունենալով իւր փոխանորդ Գեր. Գրիգոր վարդապետ Էնֆիէճեան, Գեր. Մովսէս եպիսկոպոս Ունգէրպոլեան և Վեր. Ստեփաննոս վարդապետ Երզնէան:

Ս. Պատրիարք Հայրն արժանաւորելով պատուով ընդունեց զԳերապայճաւ Բիւրէշեան և նորա բարձրաստիճան ուղեկիցքը, որք երկու ժամու մօտ նստելով սիրալիր համակրութեամբ տեսակցեցան Ս. Պատրիարք Հօր հետ, և ազգային ու կրօնական խնդրոյ վրայ խօսքեր քրին:

Երոպական քաղաքակիրթ ազգաց մէջ արուեստին և գիտութեանց այսօր յառաջդիմելուն գլխաւոր միջոցներէն մին ալ, ինչպէս յայտնի է, մրցանակն է: Մասնաւոր անձինք, ինչպէս նաև ընկերութիւնք, երբեք չեն կրնար անտեսել իրենց, զանազան կենսական գիտելիքներ, արուեստական կատարելագործութեանց և օգտակար հեղինակութեանց համար մրցանակներ կը սահմանեն, որք իրան կամ գրչիւ կըլլան արուեստագիտաց և մտանադրաց՝ իրենց ճարտարութիւնը հանձարն ու հրմտութիւնն առաջարկելով գործին ծառայեցնելու, և այսպէս արուեստք, գիտութիւնք, դպրութիւնք ներկայ հրաշալի յառաջդիմութեան հասած են և տակաւին կը յառաջդիմեն:

Թուրքիա և ընդ նմին մեր ազգը մինչև այսօր զուրկ էր այս քաջալերութեան միջոցէն. այս պատճառաւ արհեստք, գիտութիւնք և դպրութիւնք դիմելէ անշարժ միճակի մէջ են, և եթէ կայ յառաջդիմութիւն մը, այն ալ խիստ յամը, ծանրաշարժ, ակար և թերի է:

Գոհ ենք, որ ազգիս մէջ ալ կը տեսնուի վերջապէս լուսավոր և ազնուախոհ անձ մը, որ երոպական յառաջդիմութեան զօրեղ քաջալերներէն մին եղող մրցանակի դրութիւնը մեր ազգին մէջ մտցնելու ձեռնարկած է: Այս անձն է Բեդրուպուրի բընտիեալ Սեմ. Յովսէփ աղա իզմիրլեանց, Հայկական դպրութեանց սիրահար ազգային մը, որ մեր մայրենի լեզուին և պատմութեան վերաբերեալ ընտիր գրուածներ քաջալերելու համար դրամական մրցանակ մը սահմանելով ազգիս բանասիրաց կը հաղորդէ յազարայն միջոցաւ:

• • • Խմբագիր:

Ամենայն ազգ որ ունեցել է մի գաւառ երեսնք և ներկայումս էլ կ'ամենում է յառաջդիմելու պարտ է սիրով փայլե տանել իւր պատմութեան և լեզուի մշակութեան վրայ. զի փորձով ստուգուած է որ առանց այս իրարու հետ սերտ կապած գիտութիւնների հիմնաւոր ուսման ոչ մի ազգ կարող չէ բուռն ազգային հոգւով իրենց անել նոր ժամանակիս պիտոյքներն և կանոնաւոր դարձնել անոնց իւր բարոյական ոյժերին:

Ուրախակ է տեսնել որ մերազնեայք՝ իրեն հետեւողք այս անհերքելի համարտութեան մանաւանդ վերջին ժամանակներումս առանձին խնամք են ընծայում ազգային պատմութեան և նուիրական Հայ լեզուին որ դժբաղդարար տեղ տեղ արդէն դադարել էր հնչելուց:

Ողջունելով այս աւետաւոր երեսին ազգային դպրութեան մէջ՝ մեր ևս կամեցանք զէթ փոքու իմն քաջալեր համագիտական նորան յայտնել իւր արտաբերութեան և մարտնչի լեզուի վերաբերեալ լուսաւոյն շարաւըրութեանց համար, որոյ հետագայ պայմանները խնդրում ենք հրատարակել մեր պատմական Մատիկի մէջ ի գիտութիւն ամենայն Հայ բանասիրաց: Սոյն խնդիրը մեր միւս ազգային թերթերին ևս ուղղւելով՝ ձեռք կ'առարկուի յարգանք առ Ձեզ անձնուէր:

Թուիւն 1917 թ. Դեկտեմբեր 27

6 մարտի 1875 Ս. Պատրիարքարան:

ՊԱՅՄԱՆՔ ՄԱՐԿԱՆԻ

1. Մրցանակի հետամուտ լինել կարող են ձեռագիր՝ ու տպուած գրաւոր և աշխարհորար ինքնուրոյն շարադրութիւնք ի մասին հայոց քաղաքական և եկեղեցական պատմութեան, ազգային օրէնսդրութեան, հիւրութեանց մայրենի լեզուի և գրականութեան, օրպէս և թատրոնական յօրինուածք:

2. Ձեռն կարող զիմել մրցանակի՝ Ա. օտար լեզուներով թարգմանուած շարադրութիւնք. Բ. դասագիրք. Գ. քրդէն մի անգամ մրցանակ գրուած աշխատութիւնների երկրորդ և յաջորդ ապագութիւնքը. Դ. մրցանակարարութեան ժամանակից ետեւ տարի առաջ տպուած շարադրութիւնք:

3. Թատրոնական դրամաներից պահանջուած որ նոցա բովանդակութեան առումով լինել հին կամ նոր ազգային երեսնքից:

4. Ամբողջ մրցանակի դաժարը՝ դաժմաւէ հինգ հարիւր ուսուրի արծաթ, որ բաժնուելու է ամեն երկու տարին մի անգամ:

5. Եթէ մրցանակի դիմող գրուածներն մէջ մրցանակի արժանի գործեր զըտնուին, նոքա րոտ իւրեանց արժանաւորեան կամ ամբողջ մրցանակը կ'ստանան (500 ռ.) և կամ սուր մէկ մասը:

6. Գրաքննիչ յանձնաժողովն ամեն երկամեակ լրագիրների միջոցաւ կը հրապարակէ իւր դատարկութիւնքը մրցանակ գրողը գործերին վրայ և կ'անուանէ կը յայտնէ թէ ո՞ր և յանուն որո՞յ առաջաւոր են յաջորդ երկամեակի մրցանակին հետամուտ շարադրութիւնքը:

7. Առաջին մրցանակը տրուելու է 1877 թ. սկզբում, իսկ միւսները հետըզհետէ ամեն մի երկամեակ:

8. Մրցանակի հետամուտ շարադրութիւնք պարտին առաքուել իւրաքանչիւր երկամեակի ընթացքում մինչև յաջորդ մրցանակարարութեան տարւոյ Յունիսար ամիսը:

Ծանոթութիւն. — Առաջին՝ սոյսինքն 1877 թ. մրցանակին մատչող շարադրութիւնքն ուղարկուելու են ի Պատրիարքարան Տէր Եղիշեան քահանայ Պողոսեանին:

(Գաղղիներէն. Սէն Բեթլեհեմ, Բեթլեհեմի Ե. Նեփտի, Գեթ Ե. Լեւոն Ա. Գեթիէն):

* Կը պահանջուի որ ձեռագիրները մտքուր ու պարզ գրուած լինին:

ՀԱՅՈՑՈՅԻԹԻՒՆԵՐ ԵՒ ՍՏՈՒԹԻՒՆԵՐ

Պ. Օգոսէն:

Դիտենք որ կարի յաղուած էք ձեր դատաւարտելի խորհրդակցութիւնները հրատարակուելուն վրայ, և այս պատճառաւ է որ Օրագրոյ 1489 թուով դարձեալ Հայհոյութիւններ կը ժայթքէք, Հայհոյութիւններ՝ որ օրհասական կատարի ճգնաց արդիւնք են և ոչ այլ ինչ: Յայտնապէս բընական օրինաց դէմ կը մարտնչիք, երբ ազտեղով թիւն մը ուրիշ աղտեղութեամբ մաքրելու դառն հարկին մէջ կը դնէք ինքզինքնիդ. էական խորհրդակցութիւններ և նենգութիւններ անհնար է որ հայհոյութեամբ մաքրուին. փաստ, ապացոյց և հերքում պէտք է. առանց ստանց լոկ հայհոյութիւնը՝ ձեզ ոչ միայն չկրնար արդարացնել, այլ և ձեր խորհրդակցութիւններն ու նենգութիւնները հերքելու անկարող ըլլանիդ. կատարեցանէ: Արդէն ձեր շատ մը խորհրդակցութիւնները հրատարակելինք, խորհրդակցութիւններ՝ որոց մէջ բաւար չը կրնալ հերքելէ զատ՝ բերանիդ առնելու իսկ կը ստիկար: Կը զղար անշուշտ խորհրդակցութեանց հեղինակ մը ըլլանուդ. դժբաղդութեանց վրայ, որ ձեզ հիմայ վերջին ծայր խայտառակելու պատճառ կըլլան. բայց ինչ օգուտ, ձեր ամբողջ տարրքնեւուն դառն և անխուսափելի հետեւանքն է որ կը կրէք և պիտի կրէք:

Ինչու կը խեղաթիւրէք մեր խօսքերը. մեք իրատեան Տիգրան աղային բնաւ պաշտպանութիւն չըրինք, այլ ճշմարտութիւն մը յայտնեցինք: Երբ 1481 թիւ Օրագրոյ մէջ Տիգրան աղայի անունը մեզ դէմ իբր փաստ լինելով ըսիք թէ «Թիւրքան Յարութիւն աղայի և Գեթիսեմէճի Գրիգոր աղայի հնդկական ոսկինաց երկու խնդիրները յանձնաժողովին ներկայացուց իբր ամբաստանութիւն, և չկրցաւ հաստատել, ձեր այս խօսքին դէմ մեք ալ սա հարցումը ուղղեցինք: Եթէ Տիգրան աղային չկրցաւ հաստատել, կրնայ տակից հետեւի թէ ուրիշ մը մանաւանդ թաղ-խորհրդայ անգամ մը չկրնայ հաստատել, և հետեւաւ ալ իր խնդիրներն ալ դատաւարանական ատենանքու առջև ամբաստանելի լորեն դիրներ չնկատուիլ. այս խօսքով ինչ պաշտպանութիւն ըրած կըլլանք անոր, և ո՞րն է մեր պաշտպանած կէտը: Ենթադրենք թէ Բլաւեան Տիգրան աղային իրօք չկրցաւ ապացոյցանել, բայց այսօր ուրիշ մէկը երնէ և ձեր վրայ նոյն խորհրդակցութեան խնդիրները օրինաւորապէս հաստատէ ու ապացոյցանէ, միթէ Տիգրան աղային նախապէս չկրնալ հաստատուելուն համար արդարացած չըլլաւ: Այս բնական հետեւութիւնը պաշտպանութիւն երեցնել կուզէք. տեսէ՛ք ո՞ր աստիճան յաղուած և ո՞ր աստիճան ըրջութիւնները կ'որոշուած էք:

Ինչու կը ստէք ու կըսէք թէ ստիւրիլ Մանուկ աղային նախորդ թառն ժողովոյ մէջ մեզ նախատինք ըրած է, Սամաթիոյ Բնոր. ժողովոյ կողմէ ձեզ հետ պաշտպանութիւնները օրինաւորապէս չկրնալ իրաւունք ունենալ չըրնելէ զատ՝ մեզ դէմ բաւ մ'անգամ չարտասանեց. մինչդեռ դուք էիք որ՝ հոն ձեր խօսքին ետեւն ու առջև չնայելով ժողովոյն արժանապատուութեանը դաշնու յանգրեւ յարտաքնեցաք ժողովրդանէն: Այս երկրորդ անգամէն որ յիշեալ թառն ժողովը ձեզ իւր ներկայութիւնէն արտաքնեց, և բնաւ կարեւորութիւն չտուեւ ձեր պաշտպանութեան վրէժի վրէժիդութեան սկսումը յաջորդեցաք Յուլիս 31 ժողովարանային հար-

ւածը տալ ժողովոյն, և ազգային օրինաւոր իշխանութիւն մը տալարու պատճառ եղաք: Դուք էիք որ Յուլիս 31 դէպքը ժողովրդային արդար յեղափոխութիւն կոչեցիք: Օրագրոյ թերթերով, և հիմա զայն անհնազաւարի դէպք կը կոչէք: Այն օրը ժողովոյն մէջ նախատուող անձինքը քանիցս ալ դուք նախատեցիք Օրագրոյ մէջ, միայն համար թեմէ կերպաւ, իսկ միւսին համար «Ժամերով ճեմիլին մէջ պահուելուցաւ» ըսելով: Այս անդճարար նախատեցիք այն անձինքն՝ որք այսօր հոգւով չափ ձեզ կը պաշտպանեն և կը փափաքին իսկ որ ձեր դրամական նենգութիւններէն անպարտ արձակուիք: Մասնաւոր հրապարակին վրայ այն անձանց հակառակորդ կարծուած է, վեհանձնաւար լուծեամբ անցաւ այդ կէտերուն վրայէն, որ անոնց պատուոյ զբաղմանը կը դաշնէն, մանաւանդ յուս և կարեկցութիւն յայտնեց անոնց բարոյապէս և նիւթապէս կըրած միատուց նկատմամբ:

Հիմա տեսաք, Պարոն, ո՞վ է և զեր պատճառ Յուլիս 31 ցաւալի անցից. խառն ժողովին վաճառելու դիւրեք լուծելու համար չէք որ այնպիսի ջրած ու անարդարանալի միջոցի մը դիմեցիք:

Այս անգամ հարկ կը համարինք ձեր փոխանորդական պաշտօնին և զայն քննող յանձնաժողովին վրայ տեղեկութիւն տալ ընթերցողաց, որպէս զի հասկնան թէ ինչ է և ո՞ւր կը ծագած է այդ փոխանորդական խնդիրն, և թէ յանձնաժողովն ինչ ըրած է ալ ինքզինքն Նկատմամբ:

Ինչպէս ամեն ոք գիտէ, ասկէց երկուք ու կէս տարի առաջ Օրագիր և Մանգուլէ կուռի բռնուած ըլլալով իւրարու հետ, երբ Օրագիր Աղապետ վարժարանի խնդիրն յուզեց և անոր ներքին վիճակին վրայ քննութիւն մը բանալ առաջարկեց Սամաթիոյ Թաղ-խորհրդոյ միջոցաւ, որուն ատենապետն էր ինքը, Մանգուլէ՝ Թաղ-խորհրդոյն դէմ ալ ծանրը յարձակուանքներ ըրաւ. Թաղ-խորհրդոյն չկրնալով հանդուրժել պատուոյ դատ բացաւ Մանգուլէի խմբագրին դէմ, Պ. Օգոսէն փոխանորդութեամբ, Բայց Պ. Օգոսէն փոխանակ դատ վարելու և պատուոյ արդար հատուցում պահանջելու՝ դնող ինքնին հաշտուեցաւ Մանգուլէի խմբագրին հետ առանց Թաղ-խորհրդոյ դիտութեանն ու հաւանութեան: Սոր վրայ Թաղ-խորհրդոյն ալ զինքը խտրել կառավարեց, և իւր պաշտօնին անհասարակ հրատարակեց լրագրաց միջոցաւ: Պ. Օգոսէն՝ անհասարակ բառին դէմ դժգոհելով՝ վարչութեան բողոքեց, և դատ բացաւ ընդդէմ Թաղ-խորհրդոյն: Վարչութիւնն ալ քննիչ յանձնաժողով մը կարգեց սոյն խնդիրը քննելու համար: Հետեւապէս Թաղական խորհրդոյն կողմէ փոխանորդաւոր մեք ներկայացանք յանձնաժողովին, և չնորհիւ փոխարեւան և փրկատուութիւն էփէտներու յանձնաժողովը ԹԱՂԱՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՅՆ ԴԵՄ անիրաւ որոշում մը տուաւ, առարկելով թէ անուանարկութիւն ըրած է Պ. Օգոսէնի դէմ, իբր թէ Պ. Օգոսէն իր փոխանորդական պաշտօնին մէջ հաստատելով դ անուած է, և իբր թէ անոր անձնապէս հաշտուելով Թաղ-խորհրդոյն ալ հաշտուած է պատուոյ հատուցում մը ընդունած ըլլալ. այս միջոցով Պ. Օգոսէն կը լրջապի իր նպատակին վրայ իւր սոսիք լուսնընելով իր նպատակին հասնել: Թաղ-խորհրդոյն այն ատեն բողոքեց վե-

